



News Release

9 սեպտեմբերի, 2020թ.

**«Էյչ-Էս-Բի-Մի» խումբը լրացուցիչ 15,000 ԱՄՆ դոլար հատկացրեց Հայաստանում COVID-19 համավարակի հետևանքները մեղմելու նպատակով**

Հաշվի առնելով COVID-19 համավարակի հետևանքով ստեղծված ներկայիս իրավիճակը՝ առցանց հարթակներին անցումն ու դրանց կառավարումը դարձել են անհրաժեշտություն ինչպես սկսնակ, այնպես էլ գործող ձեռնարկատերերի համար: Ի լրումն 30,00 ԱՄՆ դոլարի, որը տրամադրվել էր Հայկական Կարմիր խաչի ընկերությանը համավարակի բռնկման սկզբնական շրջանում, «Էյչ-Էս-Բի-Մի» խումբն այժմ հատկացրեց 15,000 ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորում «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամին «Կորոնավիրուսից տուժած անձանց թվային գրագիտության բարելավում» ծրագրի իրականացման համար: Ծրագրի հիմնանպատակն է ստեղծել թվային վերափոխման գործընթացների հիմքեր թվայնացման համար անհրաժեշտ հմտություններ, գիտելիքներ և հնարավորություններ փոխանցելու և զարգացնելու միջոցով:

Ծրագրի երկու նպատակներն են

- կատարելագործել թվային գրագիտությունը մի շարք վեբինարների միջոցով,
- մշակել և իրականացնել թվային վերափոխման ռազմավարություններ:

Ծրագիրն ուղղված է COVID-19 համավարակից տուժած ֆիզիկական և իրավաբանական այն անձանց, որոնք դժվարանում են անցում կատարել առցանց աշխատանքին, թեև այդ իրենց համար ռազմավարական նշանակություն ունի, և որոնց անհրաժեշտ է հավելյալ ժամանակ ու ռեսուրսներ վերապատրաստման, ինչպես նաև հմտությունների ձեռքբերման ու զարգացման համար: Այսպիսով, ծրագիրը կթիրախավորի մրցութային հիմունքներով ընտրված առնվազն 50 մասնակիցների, որոնցից 25-ը կստանան թվային վերափոխման ռազմավարության մշակմանն ուղղված դասընթացներին մասնակցելու հնարավորություն մարզիչների և խորհրդատուների անմիջական ուղղորդմամբ: Ծրագրի ավարտին առնվազն 10 մասնակիցներ, որոնք հաջողությամբ կմշակեն իրենց ռազմավարությունները և կցուցաբերեն իրենց բիզնեսները թվայնացնելու պատրաստվածություն, 2 ամիսների ընթացքում կստանան շարունակական

PUBLIC

աջակցություն անասկան երկու անգամ կամ ավելին՝ ըստ անհրաժեշտության անհատական խորհրդատվության և պրակտիկ օգնության միջոցով:

Ծրագիրը միտված է երկարաժամկետ արդյունքների ապահովմանը և այդ արդյունքների ընդլայնմանը: Վերինարների ձայնագրությունները հասանելի կլինեն հատուկ ստեղծված YouTube-յան ավիքում հանրության օգտագործման համար:

HSBC Խումբ

*HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել են 2,918 միլիարդ ԱՄՆ դոլար:*

HSBC Հայաստան

*«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 362 աշխատակիցների միջոցով: 2020թ. -ի մարտի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 298 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲ-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:*

*«Ջինիշյան» հիշատակի հիմնադրամը, իր գործունեությունը սկսելով դեռ 1990-ականներից, օժանդակում է Հայաստանում սոցիալական և տնտեսական խնդիրների լուծմանը՝ ոգեշնչելով մարդկանց օգտագործել իրենց իսկ ներուժը: Հիմնադրամը գործունեություն է ծավալում Հայաստանում, Արցախում և Վրաստանում՝ կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, քաղաքացիական հասարակության, տնտեսական և համայնքային զարգացման բնագավառներում: Հիմնադրամի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել <https://www.jinashian.org>:*